ԿՈՆՑԵՊՏՈՒԱԼ ԱՐՎԵՍՏԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱԿՔՈՒԻՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ

ԱԼԲԵՐՏԻՆԱ ՂՈՔՈՅԱՆ
Արվեստի մագիստրոս
ՀԳՊԱ դասախոս

ՀԱՄԱՌՈՏ

Հոդվածում ներկայացվել են բարձր նորաձևության ամենապայծառ դեմքերից մեկի՝ բրիտանացի կուտյուրիե Ալեքսանդր Մակքուինի ստեղծագործությունները՝ կոնցեպտուալ արվեստի համատեքստում: Աշխարհահռչակ կուտյուրիեն ընդհանրապես հեղափոխական երևույթ է համարվում նորաձևության աշխարհում, որ բոլորովին նոր, արտառոց գեղարվեստական մտածողություն, ճաշակ, նորաձևության մասին պատկերացումներ է մատուցել: Ներկայացվող ուսումնասիրության շրջանակներում անդրադարձ է կատարվել վարպետի միայն մի քանի աշխատանքներին, որոնք առավել ընդգծված են արտահայտում կոնցեպտուալ արվեստի հետ օրգանական կապը: Դրանցից են, օրինակ, հաշմանդամ և գիրուկ մոդելներից մինչև ռոբոտային տեխնիկայի գործածումը պոդիումի վրա, ինչն աննախադեպ երևույթ էր բարձրարվեստ նորաձևության ամբողջ պատմության մեջ և ոմանց կողմից անընդունելի՝ ելնելով մասնագիտական որոշակի չափանիշ-ստանդարտներից: Սակայն այդ իրողությունը միանգամայն ընկալելի է, եթե դիտարկենք արվեստագետի մտահղացման հիմքում դրված գաղափարի, տեսակետի, քաղաքացիական դիրքորոշման, փիլիսոփայական հղացքի և գեղագիտական նորարարության տեսանկյունից: Մակքուինը նույնիսկ կտորի հետ աշխատելու նոր տեխնիկա էր մշակել, որի միջոցով կտորից ստանում էր քանդակներ: Նրա համար որպես աշխատանքային նյութ են ծառայել փայտը, մետաղը, ասեղնագործական տեխնիկան, թռչունների խրտվիլակները և նույնիսկ մարդը՝ մոդելը, ով իր մարմնով միաձուլվում էր թվարկված նյութերին: Մարդը՝ որպես պերսոնաժ, գաղափար կամ ֆորմա, մասնակցում է կոնցեպտուալ արվեստի ցուցադրությանը: Կուտյուրիե-արվեստագետի աշխատանքներն այսօր թանգարանային նմուշներ են, ինչպես կարող է լինել ցանակացած արվեստի գործ:

Բանալի բառեր. *կուտյուրիե, Ալեքսանդր Մակքուին, բրիտանացի դիզայներ, բարձրարվեստ, նորաձևություն, կոնցեպտուալ, արվեստ, մոդել:*

«Տվեք ինձ ժամանակ, և ես կտամ ձեզ հեղափոխություն»[1] այսպես էր որակում իր ստեղծագործական ուղին բրիտանացի անվանի կուտյուրիե[2] Ալեքսանդր Մակքուինը, որին կարելի է դասել այն եզակի ստեղծագործողների կարգին, որոնք մեծ իմաստ են ներարկում իրենց բոլոր հնարանքներում: Նրա ցուցադրած յուրաքանչյուր հատընտիր կրում էր բացորոշ խորագիր, որ ամփոփում էր հավաքածուի բովանդակ խորհուրդը: Մասնագետների բնորոշմամբ՝ նրա ամեն մի նոր հավաքածու արվեստի անզուգական ստեղծագործություն էր:

Դեռահաս տարիքից արդեն Մակքուինն անդրդվելի կամք և ուժեղ բնավորություն էր ցուցաբերում, ինչի մասին վկայում են 16 տարեկանում դպրոցը լքելու և կարի արվեստանոցում աշխատելու փաստը և նորառոճ հագուստ ստեղծելու անկոտրում փափագը: Առաջին արվեստանոցը, ուր Մակքուինն ընդունվեց աշխատանքի՝ որպես քաջահմուտ վարպետ, կոչվում էր «Savile Row», որտեղ ապագա կուտյուրիեի առաջին հաճախորդներն էին Միխայիլ Գորբաչովը և արքայազն Չարլզը: Մակքուինին հաճախակի մեղադրում էին հավաքածուների ցուցադրությունների միտումնավոր թատերականացման համար, ինչին ի պատասխան՝ նա նշում էր. «Սա արվեստ է և ոչ թե առևտուր: Այս ամենը ձեռք էր բերվել դեռ վաղ տարիքում, «Angels and Bermans կարի արհեստանոցում վաստակած աշխատանքային աննախադեպ փորձից, որտեղ ստեղծվում էին բացառապես բեմական հագուստներ, և երիտասարդ կուտյուրիեն հնարավորություն ուներ գործի դնելու իր անսահմանափակ մտքի թռիչքը: 1994 թվականին, ավարտելով Լոնդոնի «Saint Martins» նորաձևության և արվեստի քոլեջը, Մակքուինն աշխատանքի է ընդունվում «Givanchy» (Ժիվանշի) նորաձևության տանը, որտեղ ստեղծագործում է հինգ տարի: Երիտասարդ կուտյուրիեի տաքարյուն խառնվածքն ու համարձակ փորձարկումները միանգամից հավանության չեն արժանանում նորաձևության քննադատների կողմից: «Ժիվանշիում» աշխատելու տարիներին Մակքուինը սովորում է համառորեն դիմակայել ցանկացած հանիրավի քննադատության, և հենց իր հաստատակամ բնավորության շնորհիվ է, որ 2001 թվականին կուտյուրիեն հիմնադրում է սեփական «Alexander McQueen» բրենդը: 2003 թ. ԱՄՆ Դիզայներների միության կողմից արժանանում է «Տարվա

1 Dana Thomas "Gods and Kings: The Rise and Fall of Alexander McQueen and John Galliano", 2015.

2 Կուտյուրիե - բարձր նորաձևության վարպետ-արվեստագետ, ով ստեղծում է հավաքածուները:

լավագույն կուտյուրիե» տիտղոսին, այնուհետև՝ Մեծ Բրիտանիայի թագուհու կողմից Մակքուինին շնորհվում է Բրիտանական կայսրության գերագույն ասպետի շքանշան: Այդ ընթացքում Ալեքսանդրը հասնում է երևելի հաջողությունների. խանութ-սրահներ է բացում Նյու Յորքում, Միլանում, Լոնդոնում և Լաս Վեգասում: «Ժիվանշի» նորաձևության տունը լքելուց հետո Մակքուինի ստեղծագործական ձիրքն ու երևակայությունն ազատություն են ստանում. նրա հավաքածուներից յուրաքանչյուրում, հագուստին ու նորաձևությանը զուգահեռ, կշիռ են ձեռք բերում որոշակի գաղափար ու համոզմունք, տեսակետ ու հղացք, որոնք նորաձևության ասպարեզում մինչ այդ տեղ չունեին: Այս ամենի առնչությամբ հարցազրույցներից մեկում Մակքուինը նշել է. «Իմ ցուցադրությունների ժամանակ ես ձգտում եմ ցույց տալ այն ամենը, ինչից մարդիկ խուսափում են՝ սով, աղքատություն, արյուն, բռնաբարություն: Ես նայում եմ այս «նորաձև» կայսրության թանկ հանդերձանքով ու արևային ակնոցով հանրությանը և հասկանում, որ նրանց հետաքրքրությունները սահմանափակ են. դրանք կաղապարված են լոկ նորաձևության շրջանակներում: Ես ուզում եմ այդօրինակ մարդկանց ցույց տալ կյանքի հակառակ կողմը, և միգուցե նրանք դրանից ատելություն ու գարշանք ապրեն: Դա ձեռնտու է ինձ»[1]:

Մակքուինի յուրաքանչյուր նոր հավաքածու բարձր նորաձևության ասպարեզում հերթական անգամ սթրեսի էր ենթարկում հանդիսատեսին, քանի որ դրանք դժվարությամբ կարելի էր անվանել միայն նորաձև հագուստի ցուցադրություն: Հետագայում այդ անօրինակ հավաքածուներն իրապես դասակարգվեցին կոնցեպտուալ արվեստի դրսևորումների շարքը, որոնք իրենց մեջ ներառում էին մշակութային կամ սոցիալական ենթատեքստ: Նմանատիպ աշխատանքների շարքից էր 1999-ին Լոնդոնում կայացած ցուցադրությունը, որի բացումը վստահված էր 23-ամյա հաշմանդամ մոդել Էյմի Մալինզին: Երիտասարդ մոդելը զրկվել էր ոտքերից, երբ ընդամենը մեկ տարեկան էր, սակայն ցավալի փաստը բոլորովին էլ չէր ներազդել նրա հետագա հաջողությունների վրա: Թե՛ սպորտում և թե՛ նորաձևության ասպարեզում Էյմիի համար լայն ճանապարհ հարթեց հենց Մակքուինը: «Ես հագցրի նրան ժանյակե կիսաշրջազգեստ և կոպիտ կաշվե կորսետ: Շոուի ժամանակ նա կրում էր փայտյա պրոթեզներ՝ զարդարված փորագրությամբ, որը հատուկ նրա համար էր պատրաստված (նկ. 1):

1 BBC Documentary ‘The Works’ - Alexander McQueen ‘Cutting Up Rough’ 1997 (Full) https://www.youtube.com/watch?v=542vMeyma4g

Գրեթե բոլոր ամսագրերի շողշողուն շապիկներին հանդիպում են երիտասարդ, գեղեցկադեմ, առողջ, պլաստիկ վիրահատությունների զոհ մոդելները, իսկ ես ոչ մի սուպերմոդելով չեմ փոխարինի մարդկանց, ում հետ իրականացրի այս ցուցադրությունը: Նրանց մեջ կա ինքնասիրության և արժանապատվության այնպիսի անհատնում մի զգացում, ինչն իսպառ բացակայում է բարձրարվեստ նորաձևության աշխարհում. հենց այս մարդկանց եմ ես իրավ համարում գեղեցիկ»,- հարցազրույցներից մեկում նշել է Մակքուինը[1]: Այս մոտեցմամբ էլ երիտասարդ կուտյուրիեն հեղափոխական քայլ ներմուծեց նորաձևության դժվարամատույց աշխարհ՝ ընդդիմանալով բոլոր նրանց ընդվզումներին, ովքեր անտեսում և արհամարհում էին անդամալույծներին: Բնականաբար, այս ամենի համար Մակ-քուինին «շքանշան» չհանձնեցին, ընդհակառակը՝ մեղադրեցին հաշմանդամներին շահադիտական նպատակներով օգտագործելու համար: Երիտասարդ կուտյուրիեի հաջորդ տարվա հավաքածուում արտացոլվեց ռասիստական խտրականությանն ու ստրկատիրությանը վերաբերող թեման: Հավաքածուն կարելի է համարել Մակքուինի անդրանիկ ստեղծագործական շարքը, որում հեղինակը կոնցեպտուալ հագուստ ստեղծելու քայլեր էր ձեռնարկել: Հավաքածուի 80 աշխատանքներից առավելապես ակնառու էր կարմիր ուլունքներով պաճուճված հրաշագեղ զգեստը, որը մինչև գոտկատեղ ձևավորված էր ծոպերով, իսկ կարմիր ուլունքաշարերով ասեղնագործված կտորը գոտկատեղից հասնում էր մինչև գլխամաս և ծածկում ողջ դեմքը: Հագուստը ներկայացնելիս կարևոր էր ընդգծել գույնի ընտրությունը, որով հեղինակը մարմնավորել էր արնածոր տանջանքների, կտտանքների ու խոշտանգումների միտքը, իսկ բերանի, աչքերի և ընդհանրապես քողարկած ողջ դեմքի մեջ արտացոլել էր խոսքի ազատությունից զուրկ ստրուկի՝ անտեսված և հասարակության կողմից մերժված ու բարոյալքված լինելու փաստը: Ցուցադրության ավարտին բեմահարթակ է բարձրանում սև թափանցիկ և պատառոտված ցնցոտիով պարուրված, հյուծված ու վտիտ մի սևամորթ մոդել, ում վրա հատուկ ամրացված քառանկյուն կոնստրուկցիան մտածված կաշկանդում էր ձեռքերի և ոտքերի շարժումները: Վերջինիս հանդերձի բզկտված կիսաթափանցիկ կտորի տակից երևում էին սևամորթ մոդելի բարալիկ ձեռքերն ու ոտքերը, դուրս ցցված ոսկորները՝ շեշտակի

1 http://melina-design.com/A_Mcqueen_3.html վերցված է 2016 թ. ապրիլի 10-ին:

ընդգծելով ստրկության մեջ հայտնված մարդկանց տաժանակիր կյանքի բովանդակ պատկերը:

Հանրության կողմից մեծարժեք արձագանք ստացավ հատկապես «Կրոնը՝ աշխարհի բոլոր պատերազմների աղբյուր» խորագրով հավաքածուն, քանի որ թեման խիստ արդիական էր, և ցուցադրության վայրն էլ եկեղեցին էր ընտրված, իսկ մոդելները խաչելության պատկեր-դիմակներով էին, ագրեսիվ ու տարօրինակ քայլվածքով, դեմքի արհամարհական արտահայտությամբ. կարծես ուշադրություն չդարձնելով անգամ հանդիսատեսին՝ իրար հետևից անցնում էին բեմահարթակով: Այդ հավաքածուում ներկայացվել էր 17-18-րդ դդ. տղամարդկանց և կանանց հագուստի տեսականի, սակայն Մակքուինին հատուկ յուրովի ոճի ազդեցությամբ: Տպավորիչ ու արտահայտիչ աշխատանքներ էին՝ 18-րդ դարի տղամարդկանց զգեստապահարանի շքեղաշուք հագուստի տեսակը՝ ժուստյուկորը[1], որը Մակքուինը որոշ չափով փոփոխել էր՝ պահպանելով կրծքավանդակի հատվածում ոսկեթել ասեղնագործ նախշերը, ինչպես նաև նույն ժամանակաշրջանում կանանց հագուստում մեծապես տարածված սեղմիրանը[2], ինչը ևս ենթարկվել էր որոշակի ձևափոխումների: Հետաքրքիրն այն էր, որ կուտյուրիեն կրոնի և եկեղեցու թեման միաձուլել էր 18-րդ դարի հագուստին, ինչի միջոցով ներկայացրել էր լուսավորության դարաշրջանը, երբ կրոնը, որ դարեր շարունակ պատերազմների աղբյուր է եղել, մղվել էր հետին պլան, և առաջ էին եկել գիտությունը, մարդկային միտքն ու հումանիստական գաղափարները:

Առաջին իսկ հավաքածուի ցուցադրությունից հետո Ալեքսանդրը հաստատել էր իրեն որպես նորաձևության նորարար և հեղափոխական. նա չէր վարանում դուրս գալ թույլատրելի սահմաններից: Նրա ցուցադրությունների կազմակերպումը ցույց էր տալիս, որ հեղինակի համար նույնքան կարևոր էին ցուցադրության վայրի ընտրությունը, երաժշտությունը, մոդելների դիմահարդարումը, որքան հավաքածուում առկա յուրաքանչյուր հագուստ, քանզի վերոնշյալ նրբությունները հնարավորություն էին տալիս լիարժեք ներկայացնելու իր պատմությունը պոդիումի վրա, ներկայացնելու ոչ միայն նորաձև հագուստ, այլև կատարելու գործողության արվեստ

1 18-րդ դարում մեծահարուստ տղամարդկանց, հատկապես արքաների վերնազգեստի տեսակ:

2 Կորսետ, իրանը սեղմող ներքնահագուստի տեսակ:

(փերֆորմանս)։ Ոչ մի քննադատական խոսք երբևէ չէր կանգնեցնում Ալեքսանդրին. նա շարունակում էր ստեղծագործել ու արարել՝ կրկին ու կրկին անդրադառնալով նորաձևության հորիզոններում իսպառ բացակայող թեմաների։ Բազմաթիվ ու բազմաբովանդակ քննադատական արձագանքները մեծ ճանաչում և հեղինակություն բերեցին Մակքուինին։ Նրա հեղինակած prêt-à-porter հագուստների հավատարիմ երկրպագուներն էին արքայազն Չարլզը, քեմբրիջյան դքսուհի Քեյթ Միդլթոնը, հանրաճանաչ ֆուտբոլիստ Դևիդ Բեքհեմը և այլք։ Կուտյուրիեի ստեղծագործական ողջ ճանապարհի ընթացքում անդավաճան ու անմնացորդ սիրով նրա կողքին էին մայրը՝ Ջոյսը, ով աջակցում էր որդուն յուրաքանչյուր հարցում, և մշտապես ստեղծագործող արվեստագետի մուսան, լրագրող ու նորաձևության փորձագետ Իզաբել Բլոուն՝ Մակքուինի ամենամոտ ընկերը՝ երիտասարդ կուտյուրիեի տաղանդի բացահայտողը։ Նա էր, որ 1990-ին գնեց հեղինակի դիպլոմային աշխատանքը և աշխարհի համար բացահայտեց 21-րդ դարի ամենատաղանդավոր կուտյուրիեներից մեկին[1]։

Սակայն, ինչպես ասում են, մետաղադրամն ունի երկու երես, և մի օր ամեն բան կարող է ավարտվել։ 2010 թ. փետրվարի 11-ի առավոտյան Լոնդոնում գտնվող իր առանձնատանը Մակքուինը ինքնասպան է լինում։ Մինչև այսօր էլ շատերի համար անհասկանալի է, թե ինչը կարող էր նման քայլի դրդել մեծ հաջողությունների հասած կուտյուրիեին, ով նոր շունչ էր հաղորդել բարձրարվեստ նորաձևությանը։ Միգուցե դա կապված էր նրա կյանքում երկու ամենաթանկ մարդկանց կորստի հետ. նախ՝ 2007 թ., ինքնասպան եղավ Բլոուն՝ չհամակերպվելով բժիշկների ախտորոշած քաղցկեղ հիվանդությանը, այնուհետև՝ 2010 թ. փետրվարի 2-ին, կյանքից հեռացավ Մակքուինի մայրը։ Որոշ աղբյուրների հավաստմամբ՝ վերջին տարիներին հատկապես Մակքուինն աշխատում էր օրնիբուն՝ մեկ տարվա ընթացքում ներկայացնելով նույնիսկ տասը հավաքածու, ինչը, բնականաբար, կարող էր մեծ հյուծվածության և ընկճվածության պատճառ դառնալ։

Ալեքսանդր Մակքուինի պատմությունն անհավանական է ու ֆանտաստիկ. նա կարողացավ դպրոցական տարիքում կրթությունն ընդհատած պատանուց աճել ու հասնել համաշխարհային ճանաչում ունեցող նկարիչ-կուտյուրիեի աստիճանի ու փառքի։ Իր հավաքածուների

1 http://www.vogue.ru/suzy_menkes/ru/V_pamyat_ob_Aleksandre_Makkuine/վերցված է 2016 թ. ապրիլի 11-ին։

միջոցով նա պայքարում էր հանուն բնության պահպանության, հասարակության ամենատարբեր շերտերի հավասարության և աշխարհում մշտապես հաստատվելիք խաղաղության: Նրա համարձակ, ուրույն ոճը և զարմանալի շոուները ոգեշնչեցին ամբողջ նորաձևության աշխարհը, և ոչ միայն: Սույն հոդվածի շրջանակներում կներկայացնենք Ալեքսանդր Մակքուինի իրականացրած բազմաթիվ հավաքածուներից չորսը, որոնցից յուրաքանչյուրում հեղինակը ներկայացրել է ապագայի նորաձև հագուստը՝ կոնցեպտուալ արվեստի արտահայտչամիջոցների օգնությամբ:

Առաջին հավաքածուն ստեղծվել է 1999 թ.՝ «Երաժշտական զարդատուփի մեխանիկական տիկնիկ» վերտառությամբ[1]: Մակքուինը մեծ ուշադրություն էր դարձնում յուրաքանչյուր հավաքածուի ցուցադրման ընթացքում հնչող երաժշտությանը: Այս աշխատանքը ևս բացառություն չէր. հեղինակն ընտրել էր Ֆերենց Լիստի ստեղծագործություններից: Հավաքածուն բաղկացած էր 74 միավորից՝ ամբողջությամբ սպիտակ, մոխրագույն և սառը տոների մեջ: Այդ համընդհանուր սառնության մեջ որոշ աշխատանքներ ընդգծվում էին իրենց արտասովոր և ոչ ավանդական կատարողականությամբ, ինչպես, օրինակ, 41-րդ, 55-րդ, 67-րդ և 68-րդ գործերը: 41-րդ և 55-րդ մոդելները կարծես ճապոնական հովհարներ հագած լինեին, իսկ մյուս երկու մոդելների հագին, որոնք կանգնած էին բեմահարթակում պտտվող սկավառակների վրա, երկրաչափական կոնստրուկցիաներ էին: Մոդելներին պտուտակների վրա կանգնեցնելով՝ կուտյուրիեն կարծես ներկայացրել էր անկենդան ու անշունչ տիկնիկային կերպարների, որոնք ոչ մի էական գործողություն չէին կատարում: Եվ հեղինակը՝ երես առած երեխայի պես, կտրատել ու ձևափոխել էր վերջիններիս հանդերձանքը՝ անհասկանալի կոնստրուկցիաների միջոցով ստեղծելով կոնցեպտուալ հագուստ: Սակայն հավաքածուի ցուցադրության ամենատպավորիչ մասը վերջին չորս ռոպեներն էին, որոնց ընթացքում հանդիսատեսն ականատես եղավ, թե ինչպես մեքենա ներկելու համար նախատեսված երկու ռոբոտներ, սև ու դեղին գույներով անհամաչափ ու անկանոն ներկեցին անվանի մոդել Շալոմ Հարլոուի ճեփ-ճերմակ զգեստը:

Ամերիկյան «Vogue» նորաձևության ամսագրի լրագրողներից Նիքոլ Ֆիլիպսը, ով ներկա էր ցուցադրությանը, իր հոդվածում գրեց. «Դա փերֆորմանս էր, այլ ոչ թե նորաձևության շոու: Ալեքսանդր

1 Alexander McQueen Spring/Summer 1999/https://www.youtube.com/watch?v=CpvdjsFH-d8A/վերցված է 2016թ ապրիլի 11-ին:

Մակքուինի՝ 1999 թ. գարնանային Haute Couture հավաքածուում ներ-գրավված էր նաև երկու ավտոմատ նավիգացիա, որոնք կենդանացան միայն այն ժամանակ, երբ Շալոմ Հարլոուն իր հրեշտակի թևերի ճերմակության զգեստով հայտնվում է բեմահարթակում: Նա կանգնում է պտտվող սկավառակի վրա, իսկ ռոբոտները երկու կողմերից ներկում էին ոչ միայն սպիտակ զգեստը, այլև մոդելին: Երբ փերֆորմանս-ցուցադրությունն ավարտվում է, մոդելը հազիվհազ իջնում է սկավառակի վրայից և ծափահարությունների ներքո լքում բեմահարթակը»[1]: Մակքուինի այս աշխատանքը կարելի է նաև համեմատել աբստրակտ էքսպրեսիոնիզմի ներկայացուցիչ Ջեքսոն Փոլաքի ստեղծագործությունների հետ (նկ. 2): Քանզի գաղտնիք չէ, որ Փոլլաքը մեծ կարևորություն էր տալիս ստեղծագործման, արարման պրոցեսին, իսկ վերջինիս արդյունքում ստեղծված գործը ընդամենը կատարվածի վկայությունն էր: Հանրության առաջ Մակքուինը ներկելով Շալոմ Հարլոուին՝ իրականացրեց գործողություն, ինչի մասին վկայում է վերջինիս սև ու դեղին բծերով պատված սպիտակ զգեստը: Տվյալ հավաքածուն կարելի է համարել հեղինակի առաջին և ամենատպավորիչ աշխատանքներից մեկը:

Հաջորդ Haute Couture հավաքածուն իրականացվել է 2001 թ.: Երիտասարդ կուտյուրիեի կարիերայում այդ տարին դարձավ շրջադարձային՝ շնորհիվ փարիզյան նորաձևության շաբաթվա շրջանակներում կայացած «Voss» հավաքածուի ցուցադրության[2]: Հիշյալ աշխատանքում հեղինակն անդրադարձել էր երկու իրարից բոլորովին տարբեր թեմաների. առաջինը բնության պահպանությանն էր առնչվում, իսկ երկրորդը՝ հոգեբուժարանում գտնվող հիվանդներին: Բեմահարթակի կենտրոնում Մակքուինը տեղադրել էր հայելապատ մի խորանարդ, և երբ ցուցասրահը լուսավորվում է, հանդիսատեսը տեսնում է միայն սեփական արտացոլանքը: Մոտ երկու ժամ հյուրերն անհամբերությամբ սպասում էին ցուցադրության սկզբին՝ այդ ընթացքում հետևելով միայն սեփական անհանգիստ շարժումներին: Ցուցադրության ավարտին Մակքուինը խոստովանել է. «Ես տեսնում էի մոնիթորով, թե ինչպես էին նրանք հայացքը փախցնում՝ աշխատելով խուսափել իրենք իրենց նայելուց: Դա հիանալի մտահղացում էր՝ շրջել

1 http://www.vogue.com/marc-jacobs-versace-prada-vogues-25-best-90s-shows/վերցված է 2016 թ. ապրիլի 17-ին:

2 Alexander McQueen S/S RTW 2001, VOSS / https://www.youtube.com/watch?v=qynzgm9i-4LI/վերցված է 2016 թ. ապրիլի 17-ին:

դեմքով դեպի այդ մարդիկ նորաձևության ճարտարարվեստությունը»[1]: Ցուցադրման գործընթացն իրագործվում էր աղոտ լույսի ներքո՝ ապակիներով շրջափակված սենյակում, իսկ հայելիներով խորանարդը գտնվում էր ապակիների ներսում: Մոդելները կարծես թատերականացված ներկայացման մասնակցեին. նրանք տարօրինակ, անկանոն և ոչ համաչափ քայլվածքով ցուցադրում էին իրենց արտառոց հագուստները, որոնք ասես երևակայական ու անիրական աշխարհից լինեին: Հանդիսատեսի դատին էին ներկայացվել հագուստներ, որոնց իրականացման համար որպես նյութ ծառայել էին ոչ միայն կտորը, ասեղն ու թելը, այլև նյութեր, որոնցով դժվար էր պատկերացնել, թե կարելի է հագուստ ստեղծել. ահավասիկ՝ ջայլամի փետուրներ, թռչունների խրտվիլակներ, ապակյա թիթեղներ, փայտյա տաշեղներ, մետաղյա փշալարեր ու խխունջներ:

Առաջին իսկ հայացքից տպավորություն է ստեղծվում, թե Մակքուինը նմանօրինակ հագուստների միջոցով փորձել է ցույց տալ մարդկային հոգեկան անհավասարակշիռ վիճակը: Հագուստների նկարագրին անդրադառնալուց առաջ հարկ է ներկայացնել մոդելների վիրակապած գլուխները, որոնք հիվանդանոցի խնամառուների տպավորություն էին թողնում: 76 ստեղծագործությունից բաղկացած «Voss» հավաքածուում առանձնահատուկ ուշադրության էին արժանի 10-րդ, 24-րդ, 33-րդ, 37-րդ, 65-րդ և 76-րդ գործերը, որոնք աչքի էին ընկնում իրենց արտասովորությամբ: Օրինակ՝ 10-րդ աշխատանքում դրսևորվել են թե՛ բնության պահպանության խնդիրները, թե՛ հոգեբուժարանի խնամյալների կարգավիճակը (նկ. 3): Ամբողջ հագուստի և գլխի՝ անհասկանալի ուղղանկյուն տեսքով մեծ հարդարանքի վրա բույսերի և թռչունների ասեղնագործ փքված պատկերներ էին, իսկ իրար խաչված ու կապված ձեռքերը՝ ծածկված հագուստի ընդհանուր կտորով, հիշեցնում էին հոգեբուժարանում սպիտակ զսպաշապիկով «կալանավորված» հիվանդների:

Հաջորդ՝ 24-րդ մոդելը, կիսաթափանցիկ, կուրծքը բաց շղարշյա բլուզով և փետուրներից պատրաստած կիսաշրջազգեստով էր, և երբ նա, ձեռքերը գլխավերևում թափահարելով, դուրս է գալիս բեմահարթակ, անմիջապես ապշեցնում է հանդիսատեսին ոչ միայն իր տարօրինակ պահվածքով, այլև արտասովոր հագուստով և ուսերի հատվածում ու մազերի մեջ խճճված թռչունների խրտվիլակներով:

1 http://ria.ru/weekend_style/20140317/999512542.html վերցված է 2016 թ. ապրիլի 17-ին:

33-րդ հագուստն ամբողջությամբ պատրաստված էր փայտյա բարակ տաշեղներից, որոնք ցուցադրության ժամանակ մոդելը սկսում է ձեռքերով փշրել ու կոտրել: Մյուս՝ 37-րդ աշխատանքը (նկ. 4), աչքի էր ընկնում ոչ թե հագուստի անհավանական ծավալով կամ ոչ ավանդական կատարմամբ, ինչպես մնացած գործերը, այլ ձախ ուսի վրա մոտ 60 սմ բարձրությամբ փայտյա հորինվածքով, ինչը շինություն կամ դղյակ էր հիշեցնում: Հավաքածուում նմանատիպ աշխատանքի առկայությունն էլ ավելի էր ընդգծում ընտրված թեման. տպավորությունն այնպիսին էր, ասես այդ անիրական շինությունը, որ «աճել էր» մոդելի ուսին, երևակայածին ու կարծեցյալ աշխարհից դուրս եկած լիներ:

Մակքուինի ներկայացրած 65-րդ գործը հանդիսատեսի ուշադրությունը գրավում է կրկին իր ստեղծագործական կատարման վարպետությամբ ու յուրօրինակությամբ: Այս աշխատանքում մոդելի ուսերի վրա մետաղական փշերից, մուգ շագանակագույն կերպասե զգեստի վրա ասեղնագործ բուսական նախշերից ու խխունջներից ձեռքի աշխատանքով պատրաստված՝ դեպի հագուստի առաջնամաս անցումն ինքնաբերաբար գլխապտույտ էր առաջացնում, ինչը հավանաբար հեղինակի գերնպատակներից էր եղել: Եվ վերջին՝ 76-րդ աշխատանքը լուսաբանելիս՝ կարելի է վստահաբար ասել, որ այն Ալեքսանդր Մակքուինի ամենամեծ ձեռքբերումներից էր, որում հեղինակը փորձել էր արմատապես վերափոխել նորաձևության ավանդական գեղագիտական պատկերացումները: Ձայլամի կարմիր ներկած փետուրներով և ապակյա կարմիր թիթեղներով պատած զգեստը մարմնավորում էր մաշկազերծած, արնաթաթախ թռչուն: Միգուցե հենց այս ստեղծագործությունն էր առիթ տվել «The Observer Magazine» ամսագրում հավաքածուի վերաբերյալ զետեղելու «Այստեղ մաշկի ամեն մի շերտի տակ արյուն կա» արտահայտությունը[1]: Որպես նկարիչ-կուտյուրիե՝ Մակքուինը ոչ թե զուտ կտորից հագուստ էր կարել, այլ կերտել էր ամբողջական հորինվածքներ ու քանդակներ, ամեն հնարավոր ու անհնարին նյութերի կիրառմամբ հագուստ ճարտարել:

Ցուցադրության ավարտին հայելապատ խորանարդը կոտրում է, և ներսում հայտնվում է բազմոցին հենված չափազանց գեր, այսպես ասած, «ոչ մոդելային արտաքինով» մերկ մի կին՝ բարձր նորաձևության շրջանակներում երբևիցե բեմահարթակում հայտնված ամենագեր մոդելը, թթվածնաներարկիչ դիմակով, որի շուրջբոլորը

1 http://luxuryfashion.com.ua վերցված է 2016 թ. ապրիլի 18-ին:

կենդանի թիթեռներ էին: Կարելի է ենթադրել, որ հեղինակն այսկերպ հանրությանն էր ներկայացրել մայր բնությունը, որը թթվածնային պապակով ու քաղցով է տառապում: Շատ հնարավոր համեմատության եզրեր կարելի է անցկացնել Մակքուինի իրականացրած փերֆորման-սի վերջին դրվագի և Էդուարդ Մանեի հանրաճանաչ «Օլիմպիա» ստեղծագործության միջև, որովհետև թե՛ մեկ և թե՛ մյուս հեղինակն իր ներկայացրած աշխատանքով հորդորում էր գեղեցիկը փնտրել ամենուրեք և ամեն ինչում՝ զերծ մնալով զանազան կարծրատիպերից (նկ. 5): Հարկաոր է նշել նաև «Voss» հավաքածուի վերջին դրվագի և կոնցեպտուալիստ լուսանկարիչ Ջոել Պիտեր Ուիթքինի 1983 թվականին իրականացրած լուսանկարի նմանակերպության մասին: Զարմանալի է, որ Մակքուինը երբևիցե չի խոսել աշխատանքների ակնհայտ զուգահեռների մասին: Միգուցե Ուիթքինի ներկայացրած գեր կնոջ կերպարը Մակքուինի համար ծառայել է ներշնչանքի յուրօրինակ ձև և տեղ գտել նրա հավաքածուում: Այնուամենայնիվ, երկու հեղինակների աշխատանքներում էլ արտացոլվել են կոնցեպտուալիզմի դրսևո-րումներ, ինչպիսիք են ոչ էսթետիկ արվեստի ցուցադրումը կամ որոշակի խնդիրների բարձրաձայնումը արվեստի միջոցով:

Երիտասարդ կուտյուրիեն հաճախ էր խոսում իր շոտլանդական ծագման մասին, նույնիսկ հավաքածուներում էր անդրադառնում այդ թեմային: Առաջին անգամ 1995 թ. Մակքուինը ներկայացնում է «Բռնաբարված Շոտլանդիա» հավաքածուն, որտեղ արձագանք էին գտել միանգամից երկու թեմա. 18-րդ դարում՝ Յակոբինյան երկրորդ հեղափոխության ժամանակ, Բրիտանական կայսրության զորքերի կողմից Շոտլանդիայում իրականացված կոտորածը, և ընդհանրապես բռնաբարության թեման՝ որպես մարդկության կենդանական բնազդի ամենադաժան դրսևորումներից մեկը: Մոդելները, որոնք բարձրանում են բեմահարթակ, բզկտված ու ճղճղված, շոտլանդական կարմիր ու սև վանդականախշ կտորից կիսաշրջազգեստներ ու կոստյումներ էին կրում, որոնց թափանցող հատվածներից երևում էին արյունոտ վիրակապեր: Նմանաձև հագուստային մտածելակերպը լավագույնս էր արտահայտում ընտրված թեմայի ողջ խորիմաստը: Հավաքածուի ավարտին, բնականաբար, Մակքուինը մեկնաբանում է իր աշխատանքը՝ նշելով. «Այո՛, ես ծնվել եմ Անգլիայում, սակայն իմ ապուպապերը շոտլանդացիներ են, ինչի մասին ինձ մշտապես հիշեցնում է մայրս՝ Ջոյսը: Այդ իսկ պատճառով չէի կարող անտարբեր

գտնվել այս թեմայի նկատմամբ»[1]: Նա նաև հավելել է, որ ունի երեք քույր, և գիտի, թե որքան հաճախ են տղամարդկանց կողմից կանայք ենթարկվում անպատմելի դժնի բռնության: «Ես ուզում եմ, որ կանայք, որ կրում են իմ ստեղծած հագուստը, վախի զգացում տարածեն»[2]:

Երկրորդ հավաքածուն, որում կուտյուրիեն կրկին անդրադարձել էր իր նախնիների հայրենիքին, ներկայացվում է 2006 թ.[3]: «Կալլոդենի այրիները» խորագրով աշխատանքում Մակքուինը նորից վերհիշել էր բրիտանական պատմության թերևս ամենաարյունոտ էջերից մեկը՝ 1746 թ. ապրիլի 16-ը, երբ շոտլանդական Կալլոդեն գյուղի մոտ բրիտանական զորքերի հարձակման հետևանքով զոհվում է ավելի քան 1500 անմեղ բնակիչ: Ցուցասրահի վայրը նկարագրելիս հարկ է հիշատակել բեմի կենտրոնում տեղադրված ապակյա բրգաձև կոնստրուկցիայի մասին, որի գործառույթը պարզ է դառնում միայն ցուցադրության ավարտին: Հավաքածուում ներկայացված աշխատանքները բավականին զանազան էին թե՛ ձևվածքով, թե՛ հորինվածքային լուծմամբ և թե՛ կտորների բազմատեսականիությամբ: Ինչ վերաբերում է կտորների ընտրությանը, ապա հավաքածուում տեղ էր գտել նաև շոտլանդական հանրահայտ կարմիր վանդականախշը: Ձգեստներից առավել տպավորիչ էին ուրվականներ հիշեցնող մոդելները, որոնք ասես քանդակակերտ հորինվածքներ լինեին: Հեղինակի ներկայացրած տեսիլային սառը կերպարները՝ 18-րդ դարի կամ ազգային վանդականախշ հագուստով, հանդիսատեսին մի քանի րոպեների ընթացքում մտովի տեղափոխում էին Շոտլանդիա՝ Կալլոդեն գյուղ՝ հիշեցնելով «անցյալի ուրվականների» մասին:

Ինչպես արդեն նշվեց, Մակքուինի ստեղծած բազմաշերտ հագուստներն իրենց թեթևության հետ մեկտեղ քանդակագործական կերտվածք էին հիշեցնում: Եվ եթե քարն ամենաամուր նյութն է, ինչից քանդակագործը հավերժություն է կերտում, ապա կտորն ամենանուրբ ու թեթև նյութն է, ինչից Մակքուինը քանդակներ էր կերտում հագուստների տեսքով և հավերժացնում դրանք: Հայտնի է, որ երիտասարդ կուտյուրիեն իր հեղափոխական գաղափարները

1 http://www.elle.ru/moda/fashion-blog/modnyie-fetishi-aleksandra-makkuina/վերցված է 2016 թ. ապրիլի 11-ին:

2 14Luz Vargas ''Exploring the Mind of Alexander McQueen" էջ 10 http://library.wcsu.edu/dspace/bitstream/0/678/1/Final+Polished+Thesis+Paper.pdf /վերցված է 2016 թ. ապրիլի 15-ին:

3 Alexander McQueen A/W RTW 2006, Widows of Culloden/https://www.youtube.com/watch?v=uzzjFvJhpLA/վերցված է 2016 թ. ապրիլի 16-ին:

արտահայտում էր ցուցադրության վերջին րոպեների ընթացքում, և «Կալլոդենի այրիները» վերտառությամբ հավաքածուն բացառություն չէր կազմում: Հանդիսատեսը ցուցադրության վերջին հինգ րոպեներին հնարավորություն է ունենում անգլիացի երգահան, կիթառահար Ջոն Ուիլյամսի «Շինդլերի ցուցակը» երաժշտական կոմպոզիցիայի ներքո հետևելու «նորաձևության իկոնա» հորջորջվող Քեյթ Մոսսի եթերային ու նրբագեղ պարային շարժումներին, ով ասես մոլորված մի ուրվական լիներ, որ ճախրում էր անծիր խավարի մեջ (գուն. պտկ. 8): Իրականում դա ընդամենը հոլոգրամա էր, որը ցուցադրվում է ապակյա բուրգի ներսում. մոդելի կերպարը գնալով փոքրանում է՝ վերածվելով աննշան սպիտակ բծի[1]: Ցուցադրությունից մոտ մեկ ամիս անց կուտյուրիեի մեջ կրկին խոսում է իր շոտլանդական արյան կանչը. «Շոտլանդիան ինձ համար դաժան, սառը և տխուր մի երկիր է, և այն եղել է շատ ավելի դաժան, երբ այնտեղ ապրել են իմ նախնիները: Իմ հայրենասիրության պատճառը Շոտլանդիայի նկատմամբ այն է, որ վերջինիս հանդեպ անարդար են գտնվել»[2]: Հիշատակելով անցյալի սարսափների, անիրավության մասին՝ Մակքուինը յուրովի կոչ էր անում՝ ապագայում բացառելու համար այդօրինակ ոճրագործություններն ու ոտնձգությունները: Որպես առավելապես բացառիկ ուրույն ստեղծագործող՝ նա խաղաղության, հավասարության ու արդարության մասին էր լուռ «բարձրաձայնում» իր ստեղծած մասնահատուկ արվեստի միջոցով:

Բացի ինքնատիպ ու անկրկնելի հագուստ ստեղծելուց, Ալեքսանդրը մանկության տարիներից լրջորեն հետաքրքրվում էր թռչնաբանությամբ, նույնիսկ հաճախում էր թռչունների կառուցվածքի ուսումնասիրման դասընթացների: Այս հետաքրքրասիրությունն ու սերը թռչունների նկատմամբ հասնում է իր գագաթնակետին, երբ կուտյուրիեն 1995 թ. ստեղծում է «The birds»[3] և 2009-ին՝ «The Horn of Plenty»[4] հավաքածուները, որոնցում ներկայացվում է աշխատանքներ ամբողջությամբ կամ մասնակիորեն իրականացված

1 Kate Moss Hologram Alexander McQueen Fashion Show/https://www.youtube.com/watch?v=R7z4Kkh7dul/ վերցված է 2016 թ. ապրիլի 16-ին:

2 http://ria.ru/weekend_style/վերցված է 2016 թ. ապրիլի 20-ին:

3 Alexander McQueen Spring/Summer 1995, “The Birds”/https://www.youtube.com/watch?v=GOuFflTkPQ8վերցված է 2016 թ. ապրիլի 16-ին:

4 Alexander McQueen The Horn of Plenty Fall/Winter 2009/2010/https://www.youtube.com/watch?v=er20fZrHzUc

սագի փետուրներից[1]: Հատկապես արժանահիշատակ է երկրորդ հավաքածուն: Ըստ բրիտանական «Vogue» նորաձևության ամսագրի խմբագիր Միրանդա Ալմոնդի՝ 2009 թ. փարիզյան բարձրարվեստ նորաձևության շաբաթվա շրջանակներում ներկայացված հավաքածուներից ամենատպավորիչը Մակքուինի ոչ միայն հագուստներն էին, այլև ցուցադրությունը: «Այդ ցուցադրությունը վերադարձրեց հավատն առ բարձրարվեստ նորաձևություն»[2],- հետագայում պիտի նշեր իր գործի մեծագույն վարպետը: Շոուն կայանում է մի մութ դահլիճում: Բեմի կենտրոնական հատվածում վեր էր խոյացել հսկայական մի աղբակույտ, որում երևում էին կենցաղային իրերի բեկորներ, անգամ կուտյուրիեի նախկին հավաքածուներից մնացած ռեկվիզիտի մասունքներ: Վաղեմի հավաքածուներից մնացած իրերն աղբակույտում հավանաբար կրում էին հնի վախճանի շնորհիվ որևիցե նորի նորամուտը սկզբնավորելու ու կյանքի կոչելու խորհուրդը[3]: Ցուցադրության ժամանակ հնչում էր ագրեսիվ երաժշտություն, որն ուղեկցվում էր գայլի ոռնոցով, իսկ հավաքածուի ներկայացման ավարտին լսվում սրտի կարդիոգրամայի մարող և լռության վերածվող ձայն: Այս աշխատանքում անմիջապես աչքի էին զարնում գունատ, բայց վառ կարմիր շուրթերով մոդելները, որոնք ասես տիկնիկային արհեստական կերպարներ լինեին, որոնց գլուխները փաթաթված էին աղբի համար նախատեսված սև պոլիէթիլենային տոպրակներով կամ կարծես աղբանոցից հայթայթած իրերից պատրաստված գլխի հարդարանքներով: Ներկայացված աշխատանքները, որոնք դժվար թե կարելի է համարել հագուստ, իրենց ստեղծագործական կատարման վարպետությամբ արտառոց էին ու անհիրական: Որոշ գործերում արտահայտվել էր սև տոպրակներից պատրաստված հագուստի միջոցով աղբից արվեստի գործ կերտելու միտումը, որոշ գործերում էլ կրկին տեսանելի էին ազգային ակունքները, ինչն արտահայտվում էր, այսպես կոչված, «սագի թաթ»[4] կտորի նախշազարդմամբ, որը շոտ-

1 STOCKHOLM UNIVERSITY Centre for Fashion StudiesMA II Dissertation "The Perception of Fashion: Alexander McQueen. A case study of the subjective perceptual experience of five Alexander McQueen fashion shows"/Author: Maria Lindgren/Supervisor: Dr. Annamari Vänskä/ www.diva-portal.org/smash/get/diva2:444580/FULLTEXT01.pdf/ վերցված է 2016 թ. ապրիլի 22-ին:

2 http://www.vogue.co.uk/fashion/autumn-winter-2009/ready-to-wear/alexander-mcqueen/ վերցված է 2016 թ. ապրիլի 24-ին:

3 https://www.youtube.com/watch?v=E8tfyzsMTCw /վերցված է 2016 թ. ապրիլի 27-ին

4 «Սագի թաթ»՝ իրական անվանումը «շան ժանիք»:

լանդական ծագում ունի: 29-րդ և 31-րդ գործերում յուրահատուկ ձևով էր ներկայացվել նշված «սագի թաթ» նախշը, որը գեղանկարչական մոտեցմամբ ոճավորված և կաղապարված վիճակից կարծես անցում է կատարում դեպի ազատ ճախրող իրական թռչունների պատկերների (նկ. 6): Դիտարկելով այս աշխատանքները՝ կարելի է եզրակացնել, որ Մակքուինը այս եղանակով արտահայտել է ամփոփվածության և ազատության հակադիր մտածողությունները: Հավաքածուում ներկայացված մի քանի աշխատանքներում նկատվում է գեղանկարի և քանդակի սինթեզ, որտեղ գեղարվեստական ֆիգուրատիվ արվեստի ձևվածքից անցում է կատարվում դեպի մաքուր գաղափար՝ կոնցեպցիա:

Ինչպես արդեն վերը նշվեց, «The Horn of Plenty» հավաքածուում ընդգրկվել էին նաև փետրավոր կերպարներ, որոնցից ամենաազդեցիկը վերջին երկու մոդելներն էին. նրանք հանդիսատեսին ներկայացնում են հրեշտակի և սատանայի կերպարներով (նկ. 7): Երկու կոմպոզիցիաներն էլ ամբողջությամբ իրականացված էին սագի փետուրներից. դրանցից առաջինում տեսանելի էր մեղմ ու հանդարտ մի կերպար, իսկ երկրորդում այդ խաղաղության մարմնացման լիարժեք հակապատկերն էր: Ամբողջությամբ սև փետուրներից իրականացված ստեղծագործությունը կարծես չարագույժ ագռավ լիներ, մի կերպար, որ ստանձնել էր մահվան դերը, և որն էլ ազդարարում էր ոչ միայն ցուցադրության, այլև կյանքի ավարտը: Ցուցադրությունից հետո Ալեքսանդրն իր խոսքում հիշատակում է մահվան գաղափարը. «Կարևոր է վախճանին նայել որպես կյանքի մի մաս: Դա ցավալի է, մելամաղձոտ, բայց միևնույն ժամանակ ռոմանտիկ: Պարզապես ցիկլի ավարտ. չէ՞ որ ամեն բան պետք է ավարտվի: Նոր կյանքը նոր իրերին տեղ կտա»[1]: Քառասունհինգ անհասկանալի ու դրամատիկ կերպարների միջոցով այս անգամ Մակքուինը խոսում է երկու իրարամերժ ու անկախ սկզբունքների՝ դուալիստական միության մեջ կողք կողքի գոյություն ունեցող գաղափարների մասին, ինչպիսիք են, օրինակ, արհեստականն ու բնականը, լույսն ու խավարը, կյանքն ու մահը, չարն ու բարին, աղտոտվածությունն ու մաքրությունը, անգամ հրեշտակայինն ու դիվայինը: Տվյալ ստեղծագործական շարքը ևս քննադատական բազում մեկնաբանությունների թիրախ է դառնում, որոնցում հիմնականում խոսվում էր Մակքուինի աշխատանքների ծայրահեղ դրամատիզմի, կյանքի հետ անհամատեղելի և անհարմար

1 Andrew Wilson “Alexander McQueen: Blood Beneath the Skin” 2015/ https://www.amazon.com/dp/B00QCDO0G4/ref=rdr_ext_sb_pi_sims_2/ վերցված է 2016 թ. մայիսի 3-ին:

հագուստ ստեղծելու մասին: Իսկ կուտյուրիեն, ի պատասխան նրանց, հիշեցնում էր. «Բարձրառոճ նորաձևության շրջանակներում ես իրավունք ունեմ ինքնարտահայտվելու այնպես, ինչպես հարկ եմ համարում, իսկ prêt-à-porter հագուստում արտացոլվում են այդ ինքնարտահայտման որոշ տարրեր միայն: Ցավոք, բոլորս էլ գիտենք, որ հանրության մեծամասնությանը զուտ դասական կոստյում է անհրաժեշտ, սակայն դա իմ խնդիրը չէ»[1]:

Բարձրառոճ նորաձևության և արվեստի միահյուսողի, կուտյուրիե-նկարչի ցավալի ու անսպասելի վախճանը կարծես թե կանգնեցրեց այն հեղափոխական գործընթացը, որին ամեն տարի անհամբերությամբ սպասում էին փարիզյան բարձրարվեստ նորաձևության շաբաթվա հյուրերը: «Alexander McQueen» նորաձևության տունը գործում է մինչ այսօր, որի գեղարվեստական ղեկավարն է Սառա Բյորթընը, ով նորաձևության տան հիմնադրման առաջին իսկ օրից կուտյուրիեի օգնականն է եղել: «Նա իսկապես հանճար էր, զվարճալի, ոգեշնչող ու անկրկնելի: Ես չէի էլ կարող երբևիցե անգամ մտովի փորձել փոխարինել նրան, բայց հիմա, երբ հետադարձ հայացք եմ նետում, հասկանում եմ, որ ճիշտ որոշում եմ կայացրել՝ շարունակելով նրա գործը, քանզի այդպես պահպանվում են նրա արվեստանոցը, նրա շունչը և մեր թիմը: Եթե այս ամենն անհետանար, ապա ինչի՞ համար էր նա այդքան տքնաջան աշխատում այս տարիների ընթացքում»,- ասում է նա[2]:

2015 թ. Լոնդոնում «Վիկտորյա և Ալբերտ» թանգարանում ներկայացվեցին Ալեքսանդր Մակքուինի 1994-2010 թթ. իրականացված աշխատանքները: 21 շաբաթվա ընթացքում ցուցահանդես էր այցելել մոտ կես միլիոն մարդ: Թանգարանի գոյության ողջ պատմության ընթացքում այցելուների այդպիսի թվաքանակ դեռ չէր գրանցվել[3]: Ալեքսանդր Մակքուինը հաճախ էր այցելում թանգարաններ՝ ոգեշնչման նոր աղբյուրներ որոնելու նպատակով: «Վատ չէր լինի, եթե խոր ծերությանս տարիներին այցելեի սեփական արարմամբ նորաձևության իմ թանգարան»,- մի առիթով ասել է նա[4]: Ցավոք, մեծ կուտյուրիեի երազանքն իրականացավ միայն մասամբ, այն էլ՝ հետմահու: Սակայն նրա յուրահատուկ արվեստի թանգարանի հայտնվելու փաստը ի

1 Katherine Gleason “Alexander McQueen: Evolution”2012 / https://www.amazon.com/dp/B00QCDO0G4/ref=rdr_ext_sb_pi_sims_2 վերցված է 2016 թ. մայիսի 8-ին:

2 http://www.vogue.ru/fashion/news/357549/վերցված է 2016 թ. մայիսի 16-ին:

3 https://lenta.ru/news/2016/01/22/mcqueen/վերցված է 2016 թ. մայիսի 19-ին:

4 http://www.vogue.ru/fashion/news/357549/վերցված է 2016 թ. մայիսի 22-ին:

լուր համայնի տարածեց նրա ստեղծագործության ամբողջ էությունը, որն անհերքելիորեն պատկանում է բարձրարվեստի աշխարհին: Այն միաժամանակ ներկայացավ որպես մի նոր հայտ՝ ընդհանրապես բարձրարվեստ նորաձևության ժամանակակից երևույթը արվեստի ճյուղ դիտարկելու և ըստ այդմ՝ խորազնին ուսումնասիրելու համար:

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Эндрю Уилсон «Александр Маккуин. Кровь под кожей» Москва 2016 г.

Andrew Bolton, Tim Blanks "Alexander McQueen: Savage Beauty", 2011

Deniau Anne, "Love Looks Not with the Eyes: Thirteen Years with Lee Alexander McQueen" 2012

Claire Wilcox, Sally Singer, Robert Fairer Alexander McQueen: Unseen 2016

Dana Thomas, ‘’Gods and Kings: The Rise and Fall of Alexander McQueen and John Galliano’’2015

Judith Watt "Alexander McQueen: The Life and Legacy " 2013

Katherine Gleason, “Alexander McQueen: Evolution”, 2012

Luz Vargas, "Exploring the Mind of Alexander McQueen", 2012

Susannah Frankel "Alexander McQueen: Working Process" Photographs by Nick Waplington 2013

STOCKHOLM UNIVERSITYCentre for Fashion StudiesMA II Dissertation

"The Perception of Fashion: Alexander McQueen. A case study of the subjective perceptual experience of five Alexander McQueen fashion shows"/Author: Maria Lindgren/Supervisor: Dr. Annamari Vänskä/

www.diva-portal.org/smash/get/diva2:444580/FULLTEXT01.pdf

http://library.wcsu.edu/dspace/bitstream/0/678/1/Final+Polished+Thesis+Paper.pdf

BBC Documentary ‘The Works’ - Alexander McQueen ‘Cutting Up Rough’ 1997 (Full) https://www.youtube.com/watch?v=542vMeyma4g

http://melina-design.com/A_Mcqueen_3.html

http://www.vogue.ru/suzy_menkes/ru/V_pamyat_ob_Aleksandre_Makkuine

Alexander McQueen Spring/Summer 1999/https://www.youtube.com/watch?v=CpvdjsFHd8A

http://www.vogue.com/marc-jacobs-versace-prada-vogues-25-best-90s-shows/

Alexander McQueen S/S RTW 2001, VOSS / https://www.youtube.com/watch?v=qynzgm9i4LIhttp://ria.ru/weekend_style/20140317/999512542.html

http://luxuryfashion.com.uaվերցված է 2016թ.

http://www.elle.ru/moda/fashion-blog/modnyie-fetishi-aleksandra-makkuina/

http://library.wcsu.edu/dspace/bitstream/0/678/1/Final+Polished+Thesis+Paper.pdf

Alexander McQueen A/W RTW 2006, Widows of Culloden/https://www.youtube.com/watch?v=uzzjFvJhpLA/

Kate Moss Hologram Alexander McQueen Fashion Show/https://www.youtube.com/watch?v=R7z4Kkh7duI/

http://ria.ru/weekend_style

Alexander McQueen Spring/Summer 1995, "The Birds"/https://www.youtube.com/watch?v=GOuFflTkPQ8

Alexander McQueen The Horn of Plenty Fall/Winter2009/2010/https://www.youtube.com/watch?v=er20fZrHzUc

http://www.vogue.co.uk/fashion/autumn-winter-2009/ready-to-wear/alexander-mcqueen/

https://www.youtube.com/watch?v=E8tfyzsMTCw

https://www.amazon.com/dp/B00QCDO0G4/ref=rdr_ext_sb_pi_sims_2

https://www.amazon.com/dp/B00QCDO0G4/ref=rdr_ext_sb_pi_sims_2

Alexander McQueen Spring/Summer 2010 (Platos Atlantis Spécial Edition)/https://www.youtube.com/watch?v=q_2bBiAZgXk

Alexander McQueen Spring/Summer 2010 (Platos Atlantis Spécial Edition)https://www.youtube.com/watch?v=q_2bBiAZgXk

http://www.vogue.ru/fashion/news/357549/

https://lenta.ru/news/2016/01/22/mcqueen/http://www.vogue.ru/fashion/news/357549

SUMMARY
Manifestation of Conceptual Art in the Works of Alexander McQueen

Albertina Ghojoyan
Master of Arts
Lecturer at SAFAA

"A couturier must be an architect for design, a sculptor for shape, a painter for color, a musician for harmony, and a philosopher for temperance."This famous comment by couturier Cristobal Balenciaga is the best expression for the fact, that haute couture is an independent integral part of art. Indeed, each collection of "haute couture" is originally founded on a unique artistic idea, the author's conception, integrity of impression. This is reflected in the sequence of garments, which is typical of any work of art or series of works. If, for example, in painting the artist's concept is expressed in terms of lines, color, light and shade, or the use of technical capacities of the paint and structural features, in haute couture this is achieved through different fabrics, textures, any materials used to create a garment, by sewing, knitting, and the same light and shade, color combinations, and creation of volume. Each garment

is represented as a single composition, and the whole collection – as a composite organization for display. Moreover, like other forms of art, high fashion also responds to different artistic directions, trends and styles from minimalism to conceptual art. The aim of the article is to present the creations of one of the most prominent figures in high fashion, British designer Alexander McQueen, in the context of conceptual art. The world-famous couturier is generally considered a revolutionary phenomenon in the fashion world, who offered completely new, bizarre ideas about fashion. On the sidelines of this study a few of the master's works are described, which reflect an organic link with conceptual art. These include, for example, the use of models with disabilities or overweight and robotic equipment, which is unprecedented in the entire history of fashion and is highly unacceptable to some, on the assumption of specific professional standards or criteria. But these phenomena are quite understandable if we consider them from the viewpoint of the idea, underlying the concept, the opinion, political views, philosophical thinking of the master and artistic innovations. McQueen has even developed a new technique for working with fabrics, through which he managed to get sculptures from fabric. He used such working materials as wood, metal, embroidery, stuffed birds and even people – models, whose bodies merge with the above-mentioned materials. A human being, merging on equal terms with these materials, no longer acts as a carrier of the clothing, but becomes an integral part of the creation and the ideas of the couturier. A human being, as a character, idea or form takes part in the display of conceptual art. The works of the artist-designer today have become museum exhibits, which may happen to any work of art.

Keywords: couturier: *Alexander McQueen, British designer, haute couture, fashion, model, manifestation, art.*

РЕЗЮМЕ

Проявление концептуального искусства в работах Александра МакКуина

Альбертина Кочоян
Магистр искусств
Преподаватель в ГАХА

Статья представляет творений одного из самых ярких фигур в высокой моде, британского дизайнера Александра МакКуина, в контексте концептуального искусства. Всемирно известный кутюрье вообще считается революционным явлением в мире моды, который предложил совершенно новые, причудливые представления о моде. В рамках данного исследования описаны лишь несколько работ мастера, которые наиболее выраженно отражают органическую связь

с концептуальным искусством. К ним относятся, например, использование на подиуме моделей с ограниченными возможностями или лишним весом и роботизированного оборудования, что является беспрецедентным во всей истории моды, и было крайне неприемлемо для некоторых, исходя из определенных профессиональных стандартов или критериев. Но эти явления становятся вполне понятны, если рассматривать их с точки зрения идеи, лежащей в основе концепции, мнения, политической ориентации, философского мышления мастера и художественных инноваций. МакКуин даже разработал новую методику для работы с тканью, посредством которой можно получить из ткани скульптуры. Для него в качестве рабочего материала послужили дерево, металл, техника вышивки, чучела птиц и даже человек - модель, которая своим телом сливается с названными материалами. Человек, как персонаж, идея или форма принимает участие в показе концептуального искусства. Работы кутюрье-художника сегодня стали экспонатами музея, каковым может быть любое произведение искусства.

Ключевые слова: *кутюрье, Александр МакКуин, британский дизайнер, от кутюр, высокая, мода, модель, концептуальное, искусство.*

1

2

1 Հաշմանդամ մոդել Էյմի Մալինզինի փայտյա պրոթեզները

2 «Երաժշտական զարդատուփի մեխանիկական տիկնիկ» հավաքածուում Շալոմ Հարլոուի զգեստը, 1999

3

4

5

3 «Voss» հավաքածուի 10-րդ մոդելը

4 «Voss» հավաքածուի 37-րդ մոդելը

5 Համեմատություն Մակքուինի իրականացրած փերֆորմանսի վերջին դրվագի և Էդուարդ Մանեի նշանավոր «Օլիմպիա» ստեղծագործության միջև

6 «The Horn of Plenty» հավաքածուի 31-րդ մոդելը, 2009

7 «The Horn of Plenty» հավաքածուն եզրափակող աշխատանքը, 2009

6

7